

«ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ» ՍՊԸ 2010թ տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

REPUBLIC OF ARMENIA

«ԷԿՈՆՈՄԻԿՍ-ԱՌՐԴԻՏ»

«ECONOMICS-AUDIT»

Ս Ա Հ Մ Ա Ն Ա Փ Ա Կ



LIMITED LIABILITY

Պ Ա Տ Ա Ս Ն Ա Ս Ա Տ Կ ՈՒ Թ Յ Ա Մ Բ

COMPANY

Ը Ն Կ Ե Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Աուդիտորական ծառայությունների իրականացման Լիցենզիա ԱԾ N 085 Տրված 15.12.2010թ ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից. 378240, ք. Երևան, Կորյունի 7/1, 9 et. Erevan, st. Koryun – 7/1, 9

Հեռ. /Tel/Բջջ. /094-66-11-91, /010/ 54-09-08

30.01.13թ

## ԱՆԿԱՆ ԱՌՐԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի մասնակցին

2010 թ. տարեկան

ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի մասնակցին

Մեր կողմից իրականացվել է «ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ» ՍՊԸ-ի կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքները, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները բաղկացած հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագրից և այլ բացատրական տեղեկատվությունից:

*Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից: